# ՄՈՏԻՄԼ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՌՈՒՍ-ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ 1913-1914 թթ.

*Վ.Թունյան*

Ռուսաստանի և Գերմանիայի փոխհարաբերությունների լարվածությունը Մերձավոր Արևելքում: Կայսրերի պոտսդամյան հանդիպումը և իրավիճակը Փոքր Ասիայում: Հայկական հարցը Թուրքիայում՝ որպես Բեռլինի կոնգրեսից հետո միջազգային հարաբերությունների բացթողնված հարց: Առաջատար տերությունների շահագրգռվածությունը քայքայվող Օսմանյան Թուրքիայի պահպանման գործում: Երիտթուրքական ռեժիմը և հայերը: Ազգային վիճակում փոփոխությունների բացակայությունը որպես ազդակ՝ բարեփոխումների հասնելու համար: Ռուսաստանի և Գերմանիայի քաղաքականությունը Թուրքահայաստանում: Լուծվող նպատակները և խնդիրները: Բալկանյան պատերազմի արդյունքների ամփոփումը: Հայկական բարեփոխումների գծով ներկայացուցիչների հանձնաժողովը: Ռուսաստանի և Գերմանիայի ուժերի ու հնարավորությունների հաշվեկշիռը մանդելշտամյան նախագծի քննարկման ընթացքում: Ռուսական նախաձեռնությունը և գերմանական դիվանագիտությունը: Երկրորդ Բալկանյան պատերազմի ազդեցությունը: Բանակցությունների ձախողումը: Դոկտոր 3. Լեփսիուսի առաքելությունը: Գերմանական դիվանագիտության կողմից վճռվող նպատակները: Հայկական ռեֆորմների նոր փաթեթի ձևավորումը: Ռազմա-քաղաքական խմբավորումների Անտանտայի և Եռյակ Միության փոխհամագործակցությունը: Ռուսաստանի զիջումները, Գերմանիայի հետևողականությունը և հայերի իղձերը: 1994թ. հունվարի 26-ի ակտը: Փաստաթղթի գնահատումը ռուս-գերմանական շրջանների կողմից: Երկու կողմերի կառավարությունների ձգտումը՝ իրականացնելու ձեռք բերված համաձայնությունը: Կառավարական բանավեճերը Հայկական բարեփոխումների արդյունքների շուրջ: Աշխատանքի նորույթը որոշվում է Հայկական մարզի ստեղծման գործում Ռուսաստանի և Թուրքահայերի դրության բարելավման հարցում Գերմանիայի շահագրգռվածության բացահայտման մեջ:

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԻՆ ԱՄԻՍՆԵՐԻՆ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

*Ա.Սարգսյան*

1920թ. դեկտեմբերի 2-ին Երևանում ստորագրվեց համաձայնագիր, որով Հայաստանը հռչակվում էր Խորհրդային, և խաղաղ ճանապարհով իշխանությունն անցնում էր Հայհեղկոմի ձեռքը: Ութը կետից բաղկացած այդ փաստաթղթով չէր թույլատրվում հալածանքներ ու հետապնդումներ նախկին իշխանությունների ներկայացուցիչների, հայոց բանակի սպայական կազմի և ուրիշների նկատմամբ: Իրականում, սակայն, բոլշևիկները չհարգեցին տվյալ համաձայնագրի և ոչ մի կետը:

Ռուսաստանի օրինակով, դեկտեմբերի 6-ին հակահեղափոխության, շահամոլության և սաբոտաժի դեմ պայքարելու նպատակով Հայաստանում ևս ստեղծվեց «Արտակարգ Հանձնաժողով», այսպես կոչված, «Չէկա»: Քանի որ երկիրը խորհրդայնացվել էր անարյուն, ուստի մի շարք բոլշևիկ արկածախնդիրների կարծիքով (Ա.Նուրիջանյան, Գ.Աթարբեկյան և ուրիշներ) բանվորների և գյուղացիների դասակարգային գիտակցությունը բարձրացնելու համար հարկավոր էր արյուն թափել: Սկսվեցին խուզարկություններ, հալածանքներ, ձերբակալություններ և արդյունքում՝ «կարմիր տեռոր»: Անհանդուրժողականություն դրսևորվեց այլախոհության հանդեպ: Փաստորեն օրենքից դուրս հայտարարվեցին Հ.Հ. Դաշնակցությունը և մյուս ազգային կուսակցությունները: Հայկական բանակը լուծարվեց, և շուրջ 1500 սպաներ ու զորավարներ, թեթև հագնված, խստաշունչ ձմռան պայմաններում դուրս քշվեցին Հայաստանից և արտաքսվեցին սկզբում Բաքու, հետո Ռուսաստանի խորքերը Ռյազան և այլուր: Նախկին հայ սպաների ու հայդուկների որոշ մասը նետվեց Երևանի բանտը, որտեղ խոշտանգվեց չեկիստների կողմից: Բռնաճնշումների քաղաքականությունը արտահայտվեց նաև տնտեսության ոլորտում «ռազմական կոմունիզմի» ձևով:

Այս ամենը առաջ բերեց ժողովրդական զանգվածների խորը դժգոհությունն ու հիասթափությունը: 1921թ. փետրվարի կեսերին ժողովրդի համբերության բաժակը լցվեց, և կուտակված համընդհանուր վրդովմունքը վերաճեց համաժողովրդական տարերային ապստամբության:

## МОТИВАЦИЯ ТРУДОВОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

*С. Акопян*

Важность решений задач переходного периода обусловливает актуальность проблемы мотивации трудовой деятельности.

Мотивация это побуждение себя и других для достижения целей организации посредством удовлетворения потребностей. В содержании мотивов - побудителей трудовой активности, отражены социально одобренные ценности и нормы, личные потребности и интересы. Изучение составляющих компонент мотивации трудовой деятельности и поведения различных социальных групп работников позволяет определить ради чего работает человек. Образ жизни и сферы нетрудовой деятельности оказывают влияние на различия мотивационных структур у работников разных социально-профессиональных групп в разных трудовых ситуациях.

В настоящее время в промышленных предприятиях наблюдается трудовая пассивность, низкий уровень интенсивности и производительности труда, дисциплинированности, безответственное отношение к работе, непридприимчивость, напряженность в межличностных отношениях. Труд потерял свою социальную ценность. Большинство работников работают неудовлетворительно и реализуют часть своих возможностей.

Анализ позволяет утверждать, что низкое вознаграждение, а также отсутствие перспектив, веры в завтрашний день, действующие в обществе прежние стереотипы, отсутствие правого поля, изменение человеческих ценностей, плохая работа руководителей, их некомпетентность, слабая организация труда, бесконтрольность, неквалифицированность являются причинами низкой производительности.

Для достижения целей в организации необходимо создание условий, в которых люди будут воспринимать свой труд как осознанную деятельность. Труд должен стать источником совершенствования их возможностей и служить точкой отсчета для профессиональной и служебной карьеры.

Система ценностей работника, условия труда, в которых он работает, стимулы определяют его отношение к труду. Необходимо создание такой системы мотивации в организации, чтобы было возможным: обеспечение занятости всех работников трудом, предоставление равных возможностей для профессиональной и служебной карьеры, соответствие уровня оплаты и результатов труда, поддержание нормального морально-психологического климата.

Для мотивации целесообразно применение как экономических, так и неэкономических методов. В числе экономических прямых назовем повременную, сдельную

оплату труда, премии, участие в доходах предприятия, оплату за обучение и др. Льготы в оплате жилья, транспортного обслуживания, питание в организации применяются в качестве экономических непрямых методов. Среди неэкономических методов рекомендуются повышение привлекательности труда, предоставление возможностей сделать карьеру, принять участие в процессе формирования решений, повысить квалификацию и т. д.

В качестве основных форм мотивации работников отметим заработную плату, систему внутрифирменных льгот работникам, мероприятия, которые способны повысить содержание труда и квалификацию работника, сделать его самостоятельным и ответственным, самомотивировать, устранить проблемы в межличностных отношениях, развить доверие и взаимопонимание между членами коллектива, морально поощрить людей и дать возможность им принимать участие в делах организации.

Исследование данной проблематики и прикладные социологические рекомендации являются важнейшими предпосылками развития производства страны. На основе знаний о мотивах можно разработать систему стимулов, которая возможно будет являться базой формирования оптимального типа отношения к труду.

## ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅՈՒՆ՝ ՈՃ, ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆ

*Է. Կյուրեղյան, Ս. Հակոբյան*

Ինչպիսին պետք է լինի առաջնորդի դերում հանդես եկող ղեկավարի վարքը: Ազդեցության ի՞նչ միջոցներ և վարքի ո՞ր ոճերն են ավելի արդյունավետ՝ մարդկանց ջանքերը կազմակերպության նպատակներին ուղղելու գործընթացում:

Ղեկավարման ոճի, աշխատանքով բավարարվածության և աշխատանքի արտադրողականության հարաբերակցությունը որոշելու նպատակով կատարված էմպիրիկ հետազոտությունները թույլ են տալիս պնդելու, որ բազմաթիվ իրավիճակներում դեմոկրատական ոճը չի առաջացնում բարձր բավարարվածություն: Երբ կատարողը գործում է՝ ելնելով առաջնային պահանջմունքներից, ապա դեմոկրատական ոճը կարող է նույնիսկ նվազեցնել աշխատանքով բավարարվածության աստիճանը: Աշխատանքով բավարարվածության բարձր աստիճանը դրական ներգործություն է ունենում կադրերի հոսունության վրա, օժանդակում է աշխատատատեղերը լքելու դեպքերի և արտադրական վնասվածքների նվազեցմանը: Սակայն կադրերի ցածր հոսունությունը աշխատանքով բարձր բավարարվածության միակ գործոնը չէ: Բարձր հոգեկան տրամադրվածությունը և աշխատանքով բավարարվածությունը ոչ միշտ են հանգեցնում արտադրողականության բարձրացմանը:

Այսպիսով, ոչ թե աշխատանքով բավարարվածությունն է ապահովում բարձր արտադրողականություն, այլ հակառակը, վերջինս է պայմանավորում բավարարվածության բարձր աստիճանը: Ղեկավարման ոճը ազդում է ենթակաների աշխատանքով բավարարվածության վրա միայն հետևյալ պայմանների դեպքում. ոճը առաջացնում է արտադրողականության բարձրացում, որն իր հերթին փոխհատուցվում է աշխատանքով բարձր բավարարվածությամբ: Սակայն ուղիղ կապ ոճի և արդյունավետության միջև չի նկատվել: Այսպիսով կարելի է ասել, որ գոյություն չունի ոճ, որը բոլոր իրադրությունների համար արդյունավետ լինի:

Ղեկավարման ոճի, աշխատանքով բավարարվածության և արտադրողականության միջև հաստատուն կապի բացակայությունը ապացուցում է, որ առկա են նաև ուրիշ գործոններ:

Կարելի է պնդել, որ ղեկավարման օպտիմալ ոճը դեպի իրականությունը կողմնորոշվածն է: Իրադրությունից կախված այն կարող է փոփոխվել: Այս պատճառով, ավելի ճիշտ



են այն ղեկավարները, որոնք հաշվի են առնում իրադրության փոփոխությունը:

Այսպիսով, իրադրությանը համապատասխանող ղեկավարման ոճը աշխատանքի արդյունավետության կարևոր գործոններից է: Դրա ուսումնասիրությունը և տվյալ ուղղությամբ գործնական սոցիոլոգիական առաջարկությունները մեր արտադրության զարգացման կարևոր նախապայմաններից են:

## ПРЕДМЕТ КУЛЬТУРОЛОГИИ. СУЩНОСТЬ И ОСНОВНЫЕ ФУНКЦИИ КУЛЬТУРЫ.

*М. Оганесян*

Предмет культурологии — объективные закономерности мирового и национальных культурных процессов, памятники и явления материальной и духовной культуры, факторы и предпосылки, управляющие возникновением, формированием и развитием культурных интересов людей.

Объект культурологии — культурные аспекты различных областей общественной жизни, выявление особенностей и достижений основных культурно-исторических типов, анализ тенденций и процессов в современной социокультурной среде.

Периоды культурологии — накопление знаний, формирование представлений о предмете, выделение исходных оснований и ключевых категорий: этнографический ( 1800 — 1860 ), эволюционистский (1860 — 1895 ), исторический (1895 – 1925 ).;

"Культура" — это исторически определенный уровень развития общества, творческих сил и способностей человека, выраженный в типах и формах организации жизни и деятельности людей, а также в создаваемых ими материальных и духовных ценностях.

Структура культуры сложна и многогранна. Она включает систему образования, науку, искусство, антропологию, литературу, мифологию, политику, право, эстетику, философию и религию. Все ее элементы, взаимодействуя друг с другом, образуют единую систему уникального явления-культуры.

Овладение культурой может осуществляться в форме межличностных отношений и самообразования. Базисные элементы культуры- материальная и духовная. Материальная культура- это культура труда и материального производства,культура быта, топоса и т.д. Духовная культура — это многослойное образование, включающее в себя познавательную,интеллектуальную,философскую,нравственную, художественную,правовую и религиозную культуру.

Культура-многоуровневая система, которую принято подразделять по ее носителю, т.е. на мировую и национальную. Мировая культура-ситез лучших достижений всех национальных культур. Национальная культура-синтез культур различных классов и слоев соответствующего общества. Форма культуры- элитарная, народная, массовая.

Функции культуры- гуманистическая, трансляционная, познавательная, регулятивная, семиотическая, ценностная.Культура- социальная память человечества, цель которой- всестороннее развитие человека.

## ՌԱԶՄԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ 1918-20 թթ. ԵՎ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

*Վ. Վիրաբյան*

1. Աշխարհաքաղաքական կացությունը 1918-20թթ.: Դիվանագի- տական, տնտեսական և ռազմաքաղաքական հարաբերությունները մերձակա հարևանների, ինչպես նաև եվրոպական երկրների ու ԱՄՆ-ի հետ: ՀՀ կառավարության ռազմավարությունը և բանակի խնդիրները, ռազմական կառույցների ստեղծումը: Երկրի ներքին անվտանգության ապահովումը, այդ ուղղությամբ ձեռք բերված դրական արդյունքները, սայթաքումները:

2. Հայկական հարցը Բրեստ-Լիտովսկի հաշտության բանակցու-թյուններում (1917թ. դեկտեմբերի 9 - 1918թ. փետրվարի 18): Թուրքա-հայաստանի մասին Ռուսաստանի ժողովրդական կոմիսարների խորհրդի հրովարտակը (1917թ. դեկտեմբերի 29), և հայ քաղաքական կուսակցությունների վերաբերմունքը: Հայ ժողովրդի պատմական իրավունքի ճանաչումը բոլշևիկյան Ռուսաստանի կողմից: Արևմտյան Հայաստանում Հայկական Հարցի լուծման անհրաժեշտության ընդունումը: Հայաստանի խնդիրը և Հայկական Հարցը Բաթումի (1918թ. մայիս-հունիս) պայմանագրում: Սարդարապատյան մայիսյան (1918թ.) հերոսական ճակատամարտաշարքը և Հայաստանի Առաջին Հանրապետության ծնունդը (1918թ. հունիսի 4 - 1920թ. դեկտեմբերի 2): Հայաստանի դեֆակտո (փաստացի) ճանաչումը Փարիզի համաժողովի Գերագույն խորհրդի կողմից (1920թ. հունվարի 19): 1918թ. դեկտեմբերյան պատերազմը Հայաստանի և Վրաստանի միջև: Լոռու չեզոք գոտու առաջացումը:

3. Հայկական հարցի վերարծարծումը առաջին աշխարհամարտից հետո: Փարիզի հաշտության վեհաժողովը (1919թ. հունվարի 19 - 1920թ. հունվարի 21): Հայոց երկու պատվիրակությունները (Ազգային պատվիրակությունը՝ Պողոս Նուբար փաշայի գլխավորությամբ և Հայաստանի Հանրապետության պատվիրակությունը Ա.Ահարոնյանի գլխավորությամբ) Փարիզում: Հայկական հուշագրի ներկայացումը վեհաժողովին ("Հայկական Հարցը հաշտության վեհաժողովին առջև", 1919թ. փետրվարի 12): Հայաստանի մանդատի հանձնումը ԱՄՆ-ին Փարիզի կոնֆերանսի կողմից (1919թ. մայիսի 14): ,,Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեի" առաջարկները ԱՄՆ-ի պրեզիդենտին: Գերագույն կոմիսարի նշանակումը Հայաստանում (գնդապետ Հասկելի միսիան): ԱՄՆ-ի կոնգրեսի կողմից Հայաստանի մանդատը վերցնելու նախագահ Վիլսոնի առաջարկի մերժումը, դրդապատճառները, հետևանքները (1920թ. հունիսի 1): Սևրի պայմանագիրը (1920թ. օգոստոսի 10) անկախ Հայաստանի, նրա սահմանների մասին: Սևրյան պայմանագրի ձախողումը, գեոպոլիտիկ հետևանքները: 1920թ. օգոստոսի 10-ի համաձայնագիրը Ռուսաստանի և Հայաստանի միջև, դրա չիրականացումը:

4. Հայկական բանակը 1920թ.-ին: Հայաստանի պարտությունը 1920թ. թուրք-հայկական պատերազմում: Հայկական բանակի հոկտեմբերի 14-ի հակահարձակման ձախողումը և դրա պատճառները: Հատուկ ծառայությունների թուլությունը և անօգնականությունը էապես հակազդելու թուրքական մեքենայություններին և խարդավանքներին: Կարսի հանկարծակի և տարօրինակ անկումը, խմբապետականության, դասալքության ու հուսալքության ուժեղացումը բանակի ու ժողովրդի մեջ, կառավարական շրջաններում: Ստորացուցիչ զինադադարի կնքումը Թուրքիայի հետ: Մեծ տերությունների անտանտյան համախմբի և Խորհրդային Ռուսաստանի դիրքորոշումը 1920թ. թուրք–հայկական պատերազմում: Հայ քաղաքական կուսակցությունները և պատերազմը: ՌԽՖՍՀ-ի և Հայաստանի հանրապետության միջև հաշտության պայմանագիրը (հոկտեմբերի 28), նրա իրականացման տապալումը: Դիվանագիտական և ռազմաքաղաքական վերջին ջանքերը արմատապես շտկելու խարխլված իրավիճակը: Փոքր դաշնակցի՝ Հայաստանի լքումը ,,հզոր" դաշնակիցների կողմից: Վրաստանի ,,վտանգավոր" չեզոքությունը, ոտնձգությունները Բորչալուի, Լոռու, Արդահանի և հայկական այլ տարածքների նկատմամբ: Ադրբեջանի բացահայտ սադրիչ



գործողությունները Ղարաբաղի, Զանգեզուրի և Նախիջևանի խնդրում, գաղտնի զինակցումը քեմալական Թուրքիայի հետ՝ ընդդեմ Հայաստանի:

5. Ալեքսանդրապոլի ամոթալի պայմանագիրը (1920թ. դեկտեմբերի 2): Սևրի պայմանագրից հրաժարվելու քեմալական Թուրքիայի անօրինական պահանջը: Ալեքսանդրապոլի պայմանագրի հետևանքները հայ ժողովրդի համար: Երևանի համաձայնագիրը (1920թ. դեկտեմբերի 2): Հայաստանի Առաջին հանրապետության անկումը և խորհրդայնացումը: Հայկական հարցը Ազգերի Լիգայում: Ազգերի Լիգայի դիրքորոշումը թուրք–հայկական (1920թ.աշուն) պատերազմում:

## ԷԼԻՏԻԶՄ և ՊՈՊՈՒԼԻԶՄ

*Ն.Բաղդասարյան, Մ.Հովհաննիսյան*

Էլիտայի ուսումնասիրությունը որպես քաղաքական գիտության բակացուցիչ մաս սկսվել է 19-րդ դարի վերջին, 20-րդ դարի սկզբին: Էլիտա հասկացությունը, ըստ էության, նշանակում է ընտրյալ փոքրամասնություն, որը կոչված է բացառիկ դեր կատարելու հասարակության սոցիալական ու քաղաքական կյանքում:

Յուրաքանչյուր էլիտա իր համակարգի կրողն է: Անկախության համար մղվող պայքարում իշխանության է գալիս ազգայնական էլիտան, իսկ անկախ պետության հաստատումից հետո նրան փոխարինում է ավանդական էլիտան՝ առաջադեմ ուժերի հետ համագործակցած:

Էլիտայի այն ներկայացուցիչները, որոնք կոչված են տնօրինելու ժողովրդի ճակատագիրը և ընդունում են պետական նշանակություն ունեցող որոշումներ, համարվում են բարձրագույն էլիտա: Բացի բարձրագույնից կան նաև միջին, մարգինալ էլիտաներ:

Պոպուլիզմը, ըստ Ռեայլսի, ոչ թե դոկտրինա է, այլ ախտանիշ.

1.Պոպուլիզմը առավելապես հոգեվիճակ է և ոչ թե գործողությունների ծրագիր;

2. Նրան անհարիր է բարձր ինտելեկտի առկայությունը;

3. Նրա գաղափարախոսությունը անորոշ է: Պոպուլիզմին հատուկ է կազմակերպվածության ցածր մակարդակ և թույլ կարգապահություն: Բնական է, որ պոպուլիզմի ցանկացած դրսևորում էլիտայի կողմից վտանգավոր ու կործանարար է:

## ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ և ՏԱՐԱԾՔԸ XX ԴԱՐԻ ՎԵՐՋԻՆ

*Կ.Գևորգյան*

Նշված են տարածքի տնտեսական և քաղաքական կազմավորման առանձնահատկությունները: Սկսած XIX դարից, համաշխարհային տնտեսական տարածքի ձևավորումը: Եվրոպան որպես ԱՄՆ-ը, Ռուսաստանը, Ճապոնիան միավորող համաշխարհային տնտեսական տարածքի կենտրոն 1890 -1914 թ.թ.:

30-ականների ճգնաժամի ազդեցությունը այս կառուցվածքի վրա: Համաշխարհային տնտեսության զարգացումը Երկրորդ Համաշխարհային պատերազմից հետո, քաղաքական լծակների կենտրոնացումը ԱՄՆ-ում և ԽՍՀՄ-ում դրա տնտեսական հետևանքները:

XX-դարի վերջի համաշխարհային տնտեսական տարածքի առանձնահատկությունները՝ տնտեսական փոխհարաբերությունների աննախադեպ աճը և տնտեսական ներթափանցումը - առևտրական կապեր, ներդրումներ, ֆինանսական հոսքեր, տեխնոլոգիական փոխանակումներ: Տնտեսության բոլոր բնագավառների գյուղատնտեսության, արդյունաբերության, սպասարկման ոլորտի ու ծառայությունների մեկ ընդհանուր, համաշխարհային շուկայի մասնակից դառնալը: Պետության համար միջազգային տեխնիկա-տնտեսական

մրցակցությանը մասնակցելու ունակությունը որպես նրա ապագա գոյատևման երաշխիք:

Այս առանձնահատկություններից բխում է անհրաժեշտություն կազմավորել տնտեսական ազատ փոխանակումների տարածքներ: Նկատվում է նաև հակառակ գործընթացը պետությունների կողմից վարվող պրոտեկցիոնիզմի քաղաքականությունը և դրա արտահայտման ձևերը: Բերված են զարգացող այս երկու հակամերժ գործընթացների համաշխարհային տնտեսության գլոբալիզացիայի և պետությունների կողմից կիրառվող պրոտեկցիոնիզմի օրինակներ և վերլուծության փորձ:

Աշխատանքում մանրամասն նկարագրված են համաշխարհային ազատ փոխանակումների տարածքները Եվրոպական Միություն, ALENA; MERCOSUR, ASEAN և այլն, դրանց կազմի մեջ գտնվող երկրների տնտեսական ավանդը միության մեջ, ձևավորման պատճառները, ազդեցության ոլորտները և ամենակարևորը, դրանց ազդեցությունը տարածաշրջանի տնտեսական հաշվեկշռի վրա, ինչպես նաև քաղաքական կյանքում ունեցած նշանակությունը:

## ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ

*Մ.Սարգսյան*

Համաշխարհային հանրության զարգացման ողջ գործընթացը ցույց է տալիս, որ քաղաքականությունը գնալով ավելի ու ավելի է դառնում մարդկային հանրությունների՝ ազգերի, դասակարգերի սոցիալական մեծ ու փոքր այլ խմբերի ու դրանց շահերը արտահայտող կազմակերպությունների պետությունների, կուսակցությունների և ամբողջությամբ վերցրած ողջ մարդկության կենսագործունեության ապահովման կարևոր պայման: Դա ստիպում է յուրաքանչյուր հանրությանը և նրա շահերը արտահայտող կազմակերպությանը, սոցիալ-տնտեսական գիտատեխնիկական հոգևոր և այլն զարգացման մակարդակներին համապատասխան ձևավորել մշակել և լուծել իրենց կենսագործունեության ապահովմանը ուղղված կենսախնդիրներ, որոնց նախօրոք մտածված, կանխարկված արդյունքը ընդունված է անվանել հանրանպատակ, իսկ իրականացման ողջ գործընթացը քաղաքականություն:

Չնայած քաղաքականության որպես հանրանպատակահիրացության երևույթի պարզությանն ու հստակությանը, այնուամենայնիվ, նրա սահմանման շուրջ կան տարբեր կարծիքներ: Այսպես, Մ. Վեբերը նշում է, որ քաղաքականությունը արվեստ է հասնելու հնարավորին և անհնարինին: Ամերիկյան քաղաքագետ Ռ.Թաքերը քաղաքականությունը սահմանում է որպես ձգտում իշխանության և նրա իրականացում: Ֆրանսիայի Ֆ.Բրոն քաղաքականությունը սահմանում է որպես կոնկրետ բնագավառ, որտեղ տարբեր խմբեր պայքարում են իշխանության համար: Դժվար չէ կռահել հիշյալ սահմանումների միակողմանիությունը ու սահմանափակությունը:

Քաղաքականությունը մարդկային հանրությունների կենսագործունեության ապահովմանը ուղղված գործողությունների և գործունեությունների լայնամասշտաբ համապարփակ գործընթաց է, երբ հանրանպատակը հետապնդող սուբյեկտը իր տրամադրության տակ եղած բոլոր նյութական հոգևոր գործոնների ու միջոցների ակտիվ գործադրությամբ հասնում են այնպիսի արդյունքի, որով բավարարվում է նրա նյութական և հոգևոր պահանջմունքները, ամենից առաջ ինքնահաստատման պահանջմունքները:

Քաղաքական գործընթացին ուղղություն է տալիս հանրանպատակը: Ի տարբերություն անհատական նպատակի, հանրանպատակի ձևավորումն ու իրականացումը պահանջում է համակարգված գործողությունների ծավալում և արտահայտում է հանրային գիտակցության ակտիվության աստիճանը: Հանրանպատակի համապարփակությունը քաղաքականությանը տալիս է համապարփակ բնույթ՝ իրական կոնկրետ արդյունքով:



Քաղաքականության, որպես հանրանպատակահիրացության ողջ գործընթացի էական գծերի և յուրահատկությունների վերլուծությունը մեզ հնարավորություն է տալիս այն սահմանել որպես մարդկային հանրությունների պահանջմունքների բավարարմանը ուղղված հանրանպատակների ձևավորումը, մշակումը և իրականացումը, որը ապահովում է նրանց կենսագործունեությունը, դարձնում նրանց առավել լիարժեք ու կենսական:

Մեր կարծիքով քաղաքականության այսպիսի սահմանումը ոչ միայն հակիրճ, այլև համապարփակ և կիրառելի է նրա բոլոր ուղղությունների նկատմամբ: Այն արտացոլում է քաղաքականության ողջ գործընթացը՝ որպես սկիզբ ընթացք և ավարտուն արդյունքի ստացում:

## ПОЛИТИЧЕСКАЯ МЫСЛЬ ДРЕВНЕЙ ИНДИИ

*М. Оганесян, Н. Багдасарян*

Древняя Индия – недефференцированное религиозно-политическое общество. Ее политические учения менее известны, чем религиозно-философские. Связь политической мысли с религией – характерная черта всего древнего мира и средневековья. Древнейшие памятники религиозной мысли являются первыми источниками политических идей. Политическая мысль древней Индии носила светский характер, сводящийся к искусству управления. Падение Хараппской цивилизации, связанное с приходом ариев в Индию. Начало ве-дийского периода. Разделение общества на замкнутые касты (джати со строгой эндогамностью и разделением на четыре сословия (варны): брахманов, кшатриев, вайшье и шедров. Основы религиозно-философской и политической мысли в священных сборниках: Ригведе, Самаведе, Яджурведе и Фтхарваведе. Догма о божественном создании общественного строя. Власть из выборной переходит в наследственную ( У век до н.э. ). Возникновение 16 великих государств – маханаджанапад. Государство Магадхи. Династия Маурьев (IУ-IIвв.до н.э.). Объединение Индии в единое государство при царе Ашоке, создание империи Маурьев. "Артхашастры" – сборники, посвященные технологии осуществления власти, в которых формируется система политической организации ( раджья) и государства (мандала). Возникновение буддизма и джайнизма. "Палийский канон" и "Сутта" – происхождение общества и института власти с позиций буддизма. Концепция буддизма о создании республиканских форм государственности. Основные политико-правовые категории: рита – основа политической мысли древней Индии. Концепция изначального мирового порядка. Закон жизни общества не возникает произвольно, а дается ему свыше, как необходимость. Дхарма – многоплановая и многозначная категория. "Этическое понятие, включающее кодекс морали, праведности и весь круг обязанностей и ответственности человека" (Дж. Неру). Личная дрхама субъекта- согласно кастовой принадлежности.. Карма – метод обеспечения дхармы. Суть концепции – жизнь человека определяется не фатальностью, а его праведным поведением в настоящем и прошлом рождениях. Карма оправдывает социальные неравенства и сословно-кастовый строй, воспитывая дух смирения и подчинения власти. Данда-принудительная природа политической власти для осуществления политики. Раштра-государство или царство. Кшатра-суверенность.Апарудха-ситуация,когда правитель в изгнании Араджата-состояние безвластия. Законы Ману.

## СВОБОДА КАК УСЛОВИЕ ЧЕЛОВЕЧЕСКОГО БЫТИЯ

*Г.Акопян*

Человеческое бытие существенно отличается от других форм бытия, совершенно уникально, несопоставимо ни с каким другим видом сущего и не имеет вещественно-предметного аналога. Оно недетерминировано извне, и поэтому невозможно провести никакой непрерывной эволюционно- исторической линии постепенного превращения нечеловеческого мира в человеческое бытие. Здесь действует способ детерминации, основанный на "избегании каудального порядка мира"(Сартр).

Это значит, что человеческое бытие самоопределяется, самодетерминируется, и его "зависимость" от мира и внешних условий состоит в том, чтобы быть отличным от мира, не быть вещью, объектом. Человеческое бытие неопределимо. Нет такого предмета или процесса в мире, указав на который можно было бы сказать, что это-человеческое бытие. В этом смысле человеческое бытие независимо от внешнего природного и социального мира, ибо ничто не сообразно человеку в мире, и сам человек не может быть ни к чему сведен и ничем не может быть объяснен. У человека нет никакого внешнего основания, и в этом плане он "бессодержателен". Он не привязан ни к каким вещам, и у него нет готовой сущности. Человек лишь возможность, и необязан сам творить свою сущность как causa sui, причина самого себя. Всякая попытка человека творить свою жизнь, опираясь на внешние, социальные условия, оборачивается потерей его подлинно человеческого лица. Поэтому он должен быть свободным от всяких внешних условий. Все зависит от человека, от его свободного выбора и действия.

Человеческое бытие, следовательно, есть постоянный выход за пределы наличного бытия и результат свободной деятельности человека.

## ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

*Ս. Ոսկանյան*

Երիտասարդությունը, լինելով հասարակության հարվածային ուժը, մեծ անելիքներ ունի տնտեսական կյանքի ինտենսիվ զարգացման գործում: Երիտասարդության հասարակական վարքագիծը մասնագիտական կողմնորոշման ժամանակ,աշխատանքում, ուսումնառության ընթացքում, ընտանիքում, կենցաղում չափազանց բարդ մի գործընթաց է պայմանավորված ինչպես արտաքին ազդակներով, այնպես էլ հենց իրենց երիտասարդ մարդկանց հատկանիշներով: Ուսուցման բազմաբովանդակ ընթացքը պետք է նպատակաուղղված լինի ապագայի հասուն մարդու,մասնագետի, ապագայի քաղաքացու քաղաքական, իրավական, քաղաքացիական, աշխատանքային, էկոլոգիական, ընտանեկան բարձր հատկանիշների ձևավորմանը:

Տեղեկատվության ժամանակակից միջավայրում աճում է երիտասարդ մարդու հոգևոր անհատականությունը, առաջ են գալիս նոր պահանջներ ուսուցման գործընթացի և նրա առանձին բաղադրիչների առումով: Հոգեկան աշխարհի հարստությունը մեծ նշանակություն ունի մարդու գործունեության, անձնական վարքագծի մեջ, հասարակական կյանքում: Ահա, հենց այդ հարստության աճման խնդիրներին էլ պետք է ծառայի դասախոսական ողջ կազմի առաքելությունը:



Բարձրագույն ուսումնական հաստատության առջև դրված ամենակարևոր խնդիրներից մեկը ուսումնական գործընթացի ինտելեկտականացում է: Այսինքն ուսումնական, գիտական, գործնական, արտադրական, հասարակական – քաղաքական, ազգային և համազգային գիտակցության, քաղաքացիական ինքնագիտակցության պրոֆեսիոնալ կուլտուրայի ձևավորման, տիեզերական օրինաչափություններով ստեղծված բազմամշակույթային հանդուրժողականության և հաղորդակցման, իրավական, բարոյական, հանգստի, գեղագիտական, ընտանեկան առումներով ուսուցում և կրթություն տալը:

ՅՈՒՆԵՍԿՈ – ի միջազգային կոմիտեն աշխատում է 21 – րդ դարի կրթության զարգացման ստրատեգիական խնդիրների գծով: Այդ գործընթացում կարևորագույն տեղ են գրավում մարդասիրական, համամարդկային արժեքները և հանդուրժողականությունը, համաշխարհային մշակույթի պատմությունը, միջազգային մարդկային իրավունքների նորմերի իմացությունը, բնապահպանությունը, խաղաղությունը, դեմոկրատիան և բազմամշակութային կրթության ինտեգրալ սկզբունքները: Կատարելության ձգտող երիտասարդ մարդու կերպարը, ձգտում է լիակատար ազատության, ինքնուրույն կենսագործունեության, փոխադարձ շփման մեջ մտնել զարգացած պետությունների և այլ ազգերի ներկայացուցիչների հետ: Տեսահեռահար միջոցների ինտերնետ ուսուցման շնորհիվ երիտասարդը ենթարկվում է այլ մշակույթների ազդեցությանը , հնարավորություն է ստանում տեղեկանալ աշխարհի բազմաբովանդակ տեքստերին, տեղեկատվություններին, գիտական նորություններին, լսում է ձայնային խոսակցություններ ցանկացած հեռավորություններից: Նորագույն միջոցներով ստեղծվում է մշակույթների երկխոսության շփման դաշտ, որը արդիական ուսուցման գերխնդիրներից մեկն է: Այսօր բոլորը իրենց տեղը զիջում են աուդիո – միջոցներին, նոր ինֆորմացիոն տեխնոլոգիային /էկրանային / կուլտուրային:

Մշակույթների երկխոսությունը պետությունների միջև խաղաղության և բարեկամության հարաբերությունների գործոն է: Այն ներկայացնում է ազգամիջյան հարաբերությունների համադեմոկրատական համբ ամբողջ մարդկության մասշտաբով: Աշխարհը չի կարող գոյատևել առանց մշակույթների երկխոսության, առանց աշխարհի գլոբալ խնդիրների լուծման միասնության:

Մարդասիրական վերաբերմունքի զարգացումը, միջազգային փոխըմբռնումները, մշակութային համագործակցությունները, միասնական էկոնոմիկական ազատ ձեռներեցությունը տանում է երիտասարդությանը լիիրավ ազատության ճանապարհով: Անձի ինտելեկտուալ ազատության, ինտեր ուսուցման և հարուստ ինտերիորիզացման / ներքնաշխարհացման/ մեջ են գտնվում բարձրագույն կրթության հաջողությունները և գիտության զարգացումը: